ՀԱՆԴԷՍ ԹԱՏԵՐԱԿԱՆ

ԽԱՂԱՄՈԼ

(Տես յէջ 467)

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Հրանդ, Սմբատ և Սպոդռհ

Հրանդ. — (Ծածուկ. — Սմբատն է, սիրելի որդիս... սիրտ իմ, համբերէ, մի՛ մատներ զիս...)։

Սպոդռհ. — Ո՛հ, չէ, կարելի բան չէ, Սմբատ, ես ալ քեզի պէս լիուլի հաճոյուած եմ, կարելի բան չէ որ այդ գործէն խե՛ղճ Մուշեղը տեղեկութիւն ունենայ, շատ ալ ուրիշներն ըսեն իբրև թէ կասկածաւոր դամակներ վրան գտնուած են... Մուշեղ այդ գործին տէր չէ, և պէտք է հնարք մտածել ատոյգ յանցաւորը գտնելու. ուստի դուք, պարոն Սմբատ, մինչև որ այս գործը չմաքրուի չմնայ՝ պէտք չէ որ մեկնիք Բպոլ գնալու. հանգուցեալ հօրդ՝ Հրանդի սիրոյն համար քեզի կ'ազատեմ, միասին գործը տեսնելու և Մուշեղն ազատելու շանսնք...

Հրանդ. — (Ծածուկ. — Ի՞նչ կը լըսեմ... Սմբատ Բազու պիտի մեկնի... զիս մեռած կը կարծեն... ոտքէս գլուխս կը դողամ... բան մը կայ...)։

Սպոդռհ. — Ներեցէք, պարոն, զձեզ չտեսանք. արդեօք կարելի՞ է գիտնալ թէ դուք ինչ կ'ըսէք այս ատն մէջ առանձինն մնակ... ինչի՞ եկած էք այստեղ, ո՞վ էք, ի՞նչ կ'ուզէք...

Հրանդ. — Այդչափ ձեր հարցմանցը փոխարէն՝ ներեցէք ինծի, պարոններ, որ ես ալ ձեզի հարցնեմ թէ դուք արդեօք ո՞վ էք, որ ես ալ կարենամ...

Սպոդռհ. — Հետս եղողն է Պարոն Սմբատ՝ Հրանդ Աւետոյի որդին, որուն տան մէջ հիմա դուք կը գտնուիք. իսկ ես պարոն Սմբատին բարեկամն եմ։

Հրանդ. — Ճիշդ իմ փնտռածներս ալ դուք էք... Պարոն Սմբատ, դուն Գարեգին անունով եղբայր մ'ունիս՝ այնպէս չէ։

Սմբատ. — Այնպէս է, պարոն։

Հրանդ. — Ես եկած եմ ուրեմն եղբօրդ հետ խօսելու, և երկար ժամանակ է որ ծառան զիս այստեղ թողուց ու գնաց և ալ չերևցաւ... իրեն կը սպասեմ...

Սմբատ. — Արդեօք ներելի՞ է հարցընել թէ ի՞նչ կ'ուզէք ըսել Գարեգին եղբօրս։

Հրանդ. — Ըսելիքս ուղղակի իրեն կը պատկանի և գրամական խնդրոյ մը վրայ է... բայց լսեցի որ դուք քիչ առաջ կը խօսէիք այնպէս՝ իբրև թէ կ'ուզէք ճանապարհորդել դէպ'ի Բպոլ... եթէ ատոյգ է՝ գուցէ կարողանք միասին գնալ. ես ալ Բպոլից եկած եմ գործով և պիտի գտնեմ...

Սմբատ. — Դուք Բպոլից եկած էք. ուրեմն բազուցի՞ էք... եղբօրս հետ գործ ունիք գրամական մասի... չլինի թէ հօրս...

Հրանդ. — Այո՛, պարոն Սմբատ, հօրդ՝ պարոն Հրանդի հետ ծանօթ եմ... բայց ինչ կը վերաբերի գրամական գործոյ մասին՝ ես ուղղակի Գարեգին եղբօրդ հետ պիտի խօսիմ, նորա հետ միայն վերաբերութիւն ունի գործս։

Սպոդռհ. — Ի՛երևի որ դուք շատ ժամանակից 'ի վեր է որ ելեր էք Բպոլից, և գուցէ ձեզ ծանօթ չլինի Գարեգինի հօր՝ Հրանդի դժբախտ մահուան լուրը...

digitised by A.R.A.R.@

Հրանդ. — Մահուան լուր... և ով բերաբ ձեզի մի այդպիսի զոյժ... ես միայն երեք օր է որ հասել եմ Ռոստով, Բաղուից եկած ժամանակս քաղաքացի էր նա... ասա կ'ց լսեցիք...

Սկպուհ. — Նախ Բաղուցի անծանօթ ծեր մուրացկանէ մը որ Հրանդի թաղման ակնատես եղողէ լսեր էր, և յետոյ նաև տպագրուած մահագոյժ ազգն փոշտով ուղարկեցին Սմբատի, և ահա... խնդրեմ, Սրմբատ, շնորհես թուղթը... (Սմբատ կը հանէ կոս տայ Հրանդի, որ կարդալով կ'ըսէ).

Հրանդ. — Սուտ է այս տպագիրն, Բաղուից եկած չէ, այլ Ռոստովի մէջ տպագրուած է. Բաղուի մէջ Տէր–Աբրահամովի տպարան չկայ, որ նշանակուած է մանր տառերով այս ծանուցագրի մի եզրի վրայ՝ տրպագրական կանոնաց համաձայն. Տէր–Աբրահամովի տպարանն Ռոստովի մէջ է, այս ծանուցագիրն Ռոստով տպուած է, հետևաբար շինծու է, սուտ է...

Սմբատ. — Պարոն, կատակ է բրածդ՝ թէ ստոյգ... ասուածդ պէղ է վիրացս թէ թոյն կենացս... անգութ կատակ է... գաղրէ...

Հրանդ. — Ի՞նչ կատակ, կատակը ո՞ր է, պարոն Սմբատ... Ի՞նչ շահ ունիմ ես զուր տեղ քեզի յոյս տալու, զքեզ չարչարելու. ես շօշափելի ճշմարտութիւն մը կը ցուցընեմ, և պարձեալ կը կրկնեմ՝ այդ ծանուցագիրը սուտ ու շինծու է, և շինել տուողն անշուշտ իւր նպատակն ու շահը ունեցած պիտի ըլլայ Հրանդի մահը տարածել ուզելով. բայց տպագրատանց կանոններու անծանօթ մէկը լինելով՝ սուտ մատնուած է... խորամանկութեամբ փոշտի ձեռքով բաղուից ուղարկել են այստեղ. ուրեմն ըսել է որ նախ Ռոստովից Բաղու ուղարկուել է և ապա այնտեղից Ռոստով վերադարձուել է... այդ բանն ընողն ալ ուրիշ մէկը չէ կարող լինել, բայց եթէ ընտանի ծանօթ անձնատրութիւն մը...

Սկպուհ. — Սմբատ, այս պարոնի բասածն ու ցուցածը շիտակ ուղիղ է... ի՞նչ կ'ըսես .. չըլլայ թէ Գարեգինը...

Սմբատ. — Ա՜հ, Սեպուհ, ասքէս զլուխս կը դողամ... գուցէ թէ անպիտան Յարօն...

Հրանդ. — (ծածուկ. — Սիրտս կը վկայէր. իրենք են)։

Սկպուհ. — Լաւ կ'ըսես, կարելի է երկուքը միասին... և միթէ չտեսար այդ զոյժ հասած ժամանակ Գարեգինի խաղալն ու զուարճանալը, և Յարօյի ժպիտն ու սրտի գոհութիւնն...

Սմբատ. — Բայց, Սեպուհ, ի՞նչ նրպատակ պիտի ունեցած ըլլան այդ լրով։

Սկպուհ. — Ի՞նչ նպատակ կը փընտռես, Սմբատ. միթէ մարդս կարող է ամբարշտին գործոց նպատակները փնտռել, գտնել ու խելք հասցընել...

Սմբատ. — Սեպուհ, միթէ Գարեգինն ու Յարօն այդչափ ամբարիշտ են, որ...

Սկպուհ. — Է՛հ, ես զուր տեղ չեմ խօսիր. ես ամէն բան կը յուսամ իրենց չարութենէն. երկուքն ալ մատանց մանր ու երկար գիներ եմ...

Հրանդ. — Ո՞ր՞նք են ուրեմն այդ կասկածաւոր անպիտանները։

Սկպուհ. — Մէկը նոյն իսկ Գարեգինը՝ Սմբատի անարժան եղբայրը, միւսն ալ իւր Յարօ ծառան։

Հրանդ. — Ա՜յն որ քիչ առաջ այստեղ էր. կանչենք. ես գինքը կը խայտառակեմ...

Սմբատ. — Ես կը խայտառակեմ... Յարո՛, Յարո՛...

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Հրանդ, Սմբատ, Սեպուհ և Յարօ

Յարօ. — Հրամեցէք, պարոն Սմբատ... (ծածուկ. — Զարգուշակ ապտաբ դեռ չէ հեռացեր. — Ակնարկելով զՀրանդ)։

Սմբատ. — Յարօ, Գարեգինը տունն է, ինչի՞ այս պարոնին երկար ատեն սպասեցընել կու տաս նախասենեկին մէջ...

Յարօ. — Այո՛, պարոն Սմբատ, տան մէջ է, բայց, այսինքն, չէ, տունը չէ, ըսել կ'ուզեմ հիւանդ է, կը քնանայ, շատ նեղուած է, պատուիրեց որ գինքը հանգիստ թողում, գիշերը քուն չէ կրցած ըլլալ.

digitised by A.R.A.R.@

ուստի հարկ եղաւ որ պարոնն սպասէ... չեմ ալ գիտեր արդեօք ե՞րբ կ'արթննայ... դուցէ դեռ երկար տևէ...

Հրանդ. — Փոյթ չէ, բարեկամներ, ես այստեղ կը սպասեմ... Մենք հիմա այդ թղթով զբաղուինք, դուցէ ձեր ծառան մեզ-նից մի բան աւելի գիտնայ...

Սմբատ. — Ցարօ, այս թուղթն ո՞վ յանձնեց քեզի...

Ցարօ. — Տէր, ինչ թուղթ, ինծի թուղթ յանձնող եղած չէ մէկը... (չփո-թուած) այս թուղթը...

Սմբատ. — Այո՛, այո՛, այս թուղ-թը, այս՝ ճօրս մահուան ծանուցագիրը...

Ցարօ. — Տէր, կարծեմ դուք մոռցած պիտի լինիք որ փոչտի մշակն երբէկ բերաւ գունէն յանձնեց ինծի, կնքուած և մարքի նշանները վրան. գիտեմ որ զաքազնիէ ու զարկուած էր Բաղուից ձեր հասցէին... Բայց ինչի՞ կը հարցընէք պարոն Սմբատ, ինչ կայ որ... (ժամուկ. — Հոս մ'առած պիտի ըլլան. տեսնենք...)։

Սմբատ. — Ցարօ, դուն անիրաւ, անպիտան մէկն ես, քու մէկ ատանու-թիւնդ կայ այս գործին մէջ, ճշմարիտը խոս-տովանէ...

Ցարօ. — Չեմ իմանար, պարոն Սըմ-բատ, այդ նախատինքներն ինչի՞ կ'ըսէք. ես ինչ իմանամ փոչտի գործերէն. ինչ եղած է որ...։

Սմբատ. — Ցարօ՛, ամբոցիր սուտ ը-սելէդ, դուն շատ լաւ կ'իմանաս որ այս թուղթը չինծու է... դուն ու Գարեգինն էք չինած այս թուղթը... ո՛ զիտէ ինչ նպա-տակով...

Ցարօ. — (ժամուկ. — Մաղը ծակեր է...) Ղերերէք, պարոն Սմբատ, ձեր խոս-քերն հայերէն չեն, չիհասկնանիր են... ես բան չեմ հասկընար... կ'ըսէք թէ այդ թուղթը չինծու է, սուտ է. եթէ սուտ է՝ աւելի լաւ, ուրեմն Հրանդ իշխանն ո՞ղջ է, մեռած չէ՞...

Սեպուհ. — (Հեգնաբար) Այո՛, ո՞ղջ է, Ցարօ՛...

Ցարօ. — Ո՛հ, տէրս՝ իշխան Հրանդն ո՞ղջ է... ո՛հ, ինչպէս ուրախ եմ... վաղեմ երթամ Գարեգինէն աւետաբերս ուզեմ (կը դիմէ այլայլած դէպ'ի դուռը՝ փախչելու նպա-տակաւ. Սմբատ կզակեն կը բռնէ՝ գոչելով).

Սմբատ. — Կեցիր, անպիտան, ուր փախչիլ կ'ուզես, կեցիր... (Դռուռը կը բա-ցուի եւ ներս կը մտնեն Ոստիկանապետն եւ երկու ոստիկաններ, որք դուռը կը բռնեն)։

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Հրանդ, Սմբատ, Սեպուհ, Ցարօ, Առաջին Ոստիկանապետ և Երկու Ոստիկաններ

Ցարօ. — (Զարհուրած՝ յետ ընկրկե-լով) Ո՛հ...

Սմբատ. — Ո՛հ, զինուորք մեր ասն մէջ... ինչ կայ արդեօք...

Ոստիկան. — Ո՞վ է այս ասն մէջ Սմբատ Հրանդով Աւետեան։

Սմբատ. — Ես ինքս եմ, պարոն Ոս-տիկանապետ. ինչ կը փափաքիք...

Ոստիկան. — Եթէ դու ես Սմբատ Հրանդով Աւետեանն, ուրեմն դուն այս վայր-կենին իմ կալանաւորս ես Ոքսօժնի—սուդի բարձրագոյն հրամանով...

Սմբատ. — Ե՞ս.

Հրանդ և Սեպուհ. — Ո՛հ...

Ոստիկան. — Այո՛, դուն... Զի-նուորք, ձեր պարտքը կատարեցէք... (Եր-կու թեւերեն կը բռնեն զինուորք զՍմբատ) Երթա՛նք...։

Սմբատ. — Խնդրեմ, պարոն Ոստի-կանապետ, ըսէ՛ք ինչ բրած եմ, ինչ պատ-ճառաւ...

Ոստիկան. — Պատճառը վերջը կ'ի-մանաս. իմ պարտքս զքեզ Սուդը՝ դատա-բանը տանիլն է...

Հրանդ. — (ժամուկ. — Երդիր է տե-սածս թէ իրաւ, աչքերս կը մթնեն...)։

Սեպուհ. — Կ'ապաչեմ ըսէ, պարոն Ոստիկանապետ, կ'ապաչեմ ըսէ՛ ինչ պատ-ճառաւ (դայլագին). կ'երդնում ողորմած կայ-սեր գլխին վրայ՝ որ սխալմունք մը կայ... որ կալանաւորագ անմեղ հրեշակ մ'է...

digitised by A.R.A.R.@

Սմբատ. — Կ'երթնում եմ ալ որ անմեղ եմ...

Ղատիկան. (խստիւ նայելով Սմբատին, եւ ապա հեգնօրէն) Ո՜հ, իրաւ անմեղ հրեշտակ... ահա քեզի նման դրէն սպիտակ հրեշտակներն ու ներքէն սեւ սատանաները խիղճ չեն ըներ բանկի 3000 մանէթները գողնալ ու կուլ տալ մէկ շնչով՝ իբրեւ պուտ մը կաթիլ մը ջուր ըլլար...

Սմբատ. — Ի՞նչ կ'ըսէք... ես գողցեր եմ... ես գող եմ... Մուշէղն ըսաւ այդ բանը...

Ղատիկան. — Չէ՛ չէ՛, Մուշեղը չըսաւ... Մուշեղը թէ ինքզինքն և թէ զքեզ անմեղ կը քարոզէր... բայց զո՛ւր տեղ... մեր մի ընող չկայ... Մուշեղի գրած նամակդ, Սմբատ, երկուքնիդ ալ կը դատապարտէ... Մուշեղի գրպանէն գտնուած նամակդ փողը գողնալու մասին գրուած... անմեղ հրեշտակներ (ծաղրելով)... հէ՛, Աստուծոյ արդարութիւնը այսպէս ձեր ի՞նչ սատանաներ ըլլալը կը յայտնէ... Երթանք, քալեցէք զինուորներ...

Սմբատ. — Աստուած արդար, դա գիտես որ անմեղ եմ, դուն վկայ ես, քեզի կը բողոքեմ, տես և արդարութիւնդ յայտնէ. (կ'ելլեն)։

Ցարս. — (Դաժան. — Բամբաս, շնորհակալ եմ քեզմէ... վազեմ Գարեգինին իմաց տամ. (կ'ելլէ շտապով)։

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԻՏԱԼԻԱ

ԳԵՂԵՑԿ

Մուտք ի Վենետիկ. — Լճակք. — Շրջագայութիւն Վենետկոյ մէջ. — Մեծ ջրանցքն. — Սուրբ Մարկոսի հրապարակն. — Դքսական պալատն։

իտալիոյ թովանգակ քաղաքաց մէջ Վենետիկ իւր եւրիկին հաստարակապետութեան պատմական ամբիր վեհ յիշատակներով, իւր պէսպէս գեղարուեստական հրաշակերտութիւններով, իւր չնաշխարհիկ տեսչեամբ և դրիւք, և իւր բարեխառն կլիմայիւ եղեր է միշտ հոյակապ և ախորժելի քաղաք մի, ինչպէս իւր բնիկ ժողովրդոց, նոյնպէս և իւր հեռաւոր այցելուաց. որոնք՝ յետ միանգամ տեսանելոյ զայն, և իւր հրաշակերտից վրայ զմայլելոյ, ցժուարտաւ և չկամուրջեամբ կաթժեա կը մեկնին նորա չանհաւորեալ ժողափոխութիւն։ Ցիրաւի, մեծ ժամանակներս բաւական գիւղիրիք եղան այս քաղաքիս վրայ օրագրաց մէջ կամ առանձին մատեանների, սակայն ամենք յոկ հարեւանցի տեղեկութիւնք միայն կրնան համարուիլ։ Ներկայ գրութիւնս՝ որ արդի դարուս թագաւորական գաղիտացի հեղինակի մը գրչին արդիւնք է՝ այն ինքն է Հիպպոլիտ—Ադոլֆ Տեն։ բոլորովին տարբեր ոճով է։ Հեղինակն իւր այս գրուածքն մէջ կարժեա իբրեւ ի պատկերի կը ներկայացնէ զվենետիկ, նկարագրելով զայն իւր թովանգակ բանաստեղծական խանդով, պերճախօսական կորովով, հմտական տեղեկութեամբ, սրամիտ գիտողութեամբ ու քննադատութեամբ, ժաղկեալ և ախորժելի ոճով։ Հեղինակիս այս երկասիրութիւնն անբաղդատելի գրուածքն մի չէ։ նա ձանապարհորդելով իտալիոյ թովանգակ նշանաւոր քաղաքներու, զանոնք մի առ մի նկարագրեր է, և որոյ ամբողջութիւնը անոռանանած է ճանապարհորդութիւն յիտալիա, յորոց միայն վենետկոյ մասն ընտրելով՝ թարգմանութեամբ

digitised by A.R.A.R.@